

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԲՈՆԱԳԱՂԹՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆՁՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

անվերապահորեն դատապարտելով նախկինում տեղ գտած ԽՍՀՄ ժողովուրդների, ազգային փոքրամասնությունների եւ առանձին քաղաքացիների բռնի տեղահանման տոտալիտար պրակտիկան որպես համամարդկային, մարդասիրական սկզբունքներին հակասող չարագործություններ,

համարելով, որ ԽՍՀՄ ժողովուրդների, ազգային փոքրամասնությունների եւ առանձին քաղաքացիների բռնի տեղահանման մասին նախկին իշխանության եւ կառավարման միութենական, հանրապետական եւ տեղական մարմինների եւ պաշտոնատար անձանց կողմից ընդունած օրենսդրական եւ այլ նորմատիվ ակտերը հակահրավական են եւ անվավեր են ի սկզբանե,

հաստատելով բռնագաղթված անձանց, ազգային փոքրամասնությունների եւ ժողովուրդների պատմական արդարության վերականգնման եւ բռնագաղթման պահի իրենց բնակության վայրեր վերադառնալու իրավունքը,

գիտակցելով, որ այդ իրավունքի ապահովումն ունի միջպետական բնույթ եւ պահանջում է համաձայնեցված մոտեցումներ ինչպես բազմակողմ, այնպես էլ երկկողմ հիմքով,

անհրաժեշտ համարելով ստանձնել բռնագաղթված անձանց, ազգային փոքրամասնությունների եւ ժողովուրդների օրինական շահերի պաշտպանության եւ բռնագաղթման պահի իրենց բնակության վայրեր կամավոր վերադարձի ապահովման պարտավորությունները, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1

Կողմերը բռնագաղթման պահի իրենց բնակության վայրեր կամավոր վերադարձած բռնագաղթված անձանց ապահովում են այդտեղ մշտապես բնակվող քաղաքացիների հետ հավասար քաղաքական, տնտեսական եւ սոցիալական իրավունքներ եւ բնակեցման, աշխատանքի տեղավորման, կրթության, ազգային, մշակութային եւ հոգեւոր զարգացման պայմաններ:

Սույն Համաձայնագրի դրույթների իրականացման ժամանակ չպետք է ոտնահարվեն համապատասխան տարածքներում բնակվող քաղաքացիների իրավունքները եւ օրինական շահերը:

ՀՈՂՎԱԾ 2

Կողմերը սույն Համաձայնագրի պայմաններով վերաբնակվող անձանց քաղաքացիության հարցերը լուծում են իրենց ազգային օրենսդրությանը, իրենց միջեւ կնքված երկկողմ պայմանագրերի դրույթներին համապատասխան, ինչպես նաեւ հաշվի առնելով միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը:

ՀՈՂՎԱԾ 3

Կողմերը ստեղծում են անհրաժեշտ պայմաններ սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում հիշատակված անձանց անխափան կամավոր վերաբնակեցման համար, ներառյալ մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք ազատ անցնելու եւ երրորդ Կողմերի տարածքներով տարանցման պայմանները:

ՀՈՂՎԱԾ 4

Կողմերը պայմաններ են ստեղծում սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում հիշատակված անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքի անարգել եւ առանց մաքսատուրքի արտահանման, ներմուծման եւ տարանցման համար, օժանդակում են նրանց այդ գույքի փոխադրման գործում, ինչպես նաեւ ժամանակին ապահովում են թողնվող

անշարժ գույքի համար փաստաթղթերի ձեւակերպումը:

Այդ նպատակի համար Կողմերը կնքում են առանձին համաձայնագրեր:

ՀՈՂՎԱԾ 5

Կողմերը երաշխավորում են սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում հիշատակված անձանց կենսաթոշակային ապահովությունը՝ անկախ կենսաթոշակի նշանակման վայրից: Կենսաթոշակային ապահովության համար միջոցները, փոխադարձ հաշվարկների հիման վրա, հավաքվում են Կողմերի ազգային կենսաթոշակային հիմնադրամներում:

ՀՈՂՎԱԾ 6

Կողմերը երաշխավորում են, սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում հիշատակված անձանց՝ Կողմերի բանկային հաստատություններում տեղադրված դրամական ավանդների եւ ակտիվների պահպանությունը եւ/կամ փոխանցումը: Փոխանցվող դրամական ավանդները եւ ակտիվները ազատվում են ցանկացած հարկերից, վճարներից եւ տուրքերից:

ՀՈՂՎԱԾ 7

Ընդունող Կողմը օժանդակություն կցուցաբերի սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում հիշատակված անձանց բնակարանի կառուցման, ձեռքբերման կամ նորոգման (կահավորման) համար վարկեր ստանալու նպատակով:

ՀՈՂՎԱԾ 8

Ընդունող Կողմը սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում հիշատակված անձանց կազատի բնակեցման ժամանակաշրջանում եկամտահարկի վճարումից:

ՀՈՂՎԱԾ 9

Կողմերը սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում հիշատակված անձանց տրամադրում են սոցիալ-իրավական բնույթի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը (ԶԿԱԳ, կրթության, գույքային եւ այլ իրավահարաբերությունների մասին փաստաթղթեր):

Կողմերը միմյանց տրամադրում են սույն Համաձայնագրի պայմանների հիման վրա վերաբնակեցվող անձանց մասին տվյալները հաստատող արխիվային փաստաթղթեր: Նման փաստաթղթեր Կողմերը կտրամադրեն եւ առանձին քաղաքացիներին՝ նրանց պահանջով:

Վերոհիշյալ փաստաթղթերը տրամադրվում են անվճար:

ՀՈՂՎԱԾ 10

Կողմերը փոխադարձ օգնություն են ցուցաբերում տեղեկության փոխանակման բնագավառում եւ խորհրդակցություններ են անցկացնում սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված հարցերով:

Շահագրգիռ Կողմերը, անհրաժեշտության դեպքում, կարող են ստեղծել համատեղ աշխատանքային խմբեր՝ սույն Համաձայնագրի դրույթների կատարման հետ կապված հարցերի լուծման համար:

ՀՈՂՎԱԾ 11

Սույն Համաձայնագրի դրույթներից եւ ոչ մեկը չի խոչընդոտում Կողմերին կնքել միջազգային համաձայնագրեր, որոնք նրա դրույթները հաստատում, լրացնում եւ ընդլայնում են:

Կողմերը, անհրաժեշտության դեպքում, կկնքեն սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված երկկողմ համաձայնագրեր:

ՀՈՂՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրը կնքվում է 10 տարի ժամկետով եւ ուժի մեջ է մտնում նրա

վավերացման կամ հաստատման պահից:

Սույն Համաձայնագիրը միացման համար բաց է դրա նպատակները եւ սկզբունքները կհսող այլ պետությունների համար՝ Կողմերի համաձայնությամբ:

Կատարված է Բիշկեկ քաղաքում 1992 թվականի հոկտեմբերի 9-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հոկտեմբերի 19-ից: